ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 76-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված պատժի նվազագույն ժամկետը կրելուց հետո, դատարանի կողմից կարող է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, որ պատիժ կրող անձի ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չկա և նա բավարարում է հետևյալ չափանիշներին՝

1) առկա է դատապարտյալի համաձայնությունը,

2) չունի կարգապահական տույժ,

3) դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը ցածր է,

4) պատճառած վնասը հարթվել է կամ առկա է դատապարտյալի և տուժողի գրավոր համաձայնությունը պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ, եթե առկա է պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջ,

5) պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատել է պատժի կրման վայրում: Վերջինիս կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Պատիժը կատարող մարմնում աշխատելու հնարավորության բացակայությունը կամ առողջական խնդիրներից ելնելով դատապարտյալի չաշխատելը չպետք է հիմք հանդիսանա պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու համար։»:

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով.

«1.1. Դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ չափորոշիչները.

1) խրախուսանքի առկայությունը,

2) պատժի կրման ընթացքում մարզական, կրթական կամ մշակութային միջոցառումներին մասնակցությունը,

3) ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապը, խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,

4) հոգեկան և առողջական վիճակը, աշխատունակությունը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և հարկադիր բուժման արդյունքը,

5) հանցագործության բնույթը և հանրային վտանգավորությունը.

6) հանցագործությունների ռեցիդիվը:

Դատարանը կարող է հաշվի առնել դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու վտանգը գնահատող այլ չափորոշիչներ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ պարբերությամբ.

«Պատիժը կրելու ժամանակահատվածում անձի վարքագիծը գնահատվում է հիմք ընդունելով սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-րդ մասվ սահմանված չափորոշիչները:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 114-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին պարբերությունում «փաստացի կրել է պատժի՝» բառերը փոխարինել «բավարարում է» բառերով, իսկ «նվազագույն ժամկետը» բառերը փոխարինել «չափանիշներին» բառով,

բ. 2-րդ պարբերությունը հանել,

2) 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պատիժը կատարող հիմնարկի կողմից որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը ներկայացվում է սույն օրենսգրքի 115-րդ և 116-րդ հոդվածներին համապատասխան:»:

3) 3-րդ մասի՝

ա. 1-ին պարբերությունից «Միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար» բառերը հանել, «պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն է տալիս» բառերը փոխարինել «որոշում է կայացնում» բառերով, իսկ «անկախ հանձնաժողովը» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ անկախ հանձնաժողով)» բառերը».

բ. 2-րդ պարբերությունում «Հանձնաժողովի» բառից առաջ լրացնել «Անկախ» բառը, իսկ «գերատեսչությունների» բառից հետո լրացնել «,Հայ առաքելական եկեղեցու» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 115-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի դիմումի առկայության դեպքում դիմումի մուտքագրման պահից տասնօրյա ժամկետում պարտավոր է անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը:

Անկախ հանձնաժողովը մեկամսյա ժամկետում պարտադիր քննում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը և կայացնում պատճառաբանված որոշում՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերով և 77-րդ հոդվածով սահմանված չափանիշները և պայմանները:

Անկախ հանձնաժողովի կողմից որոշումը կայացվելուց հետո որոշման պատճենը, ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ստորագրությամբ հանձնվում է դատապարտյալին և ուղարկվում է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմին և պատժի կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

Պատիժը կատարող հիմնարկի ղեկավարը անկախ հանձնաժողովի կողմից դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիրը դատարան ներկայացնելուն հավանություն տալու մասին որոշում կայացնելու դեպքում որոշման ստացման պահից եռօրյա ժամկետում միջնորդագիր է ներկայացնում դատարան:

Միջնորդագրում առնվազն նշվում են դատապարտյալի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի կիրառված հոդվածը, պատժաչափը, պատժի սկիզբը և ավարտը, երբ է տեղափոխվել տվյալ հիմնարկ, պատժաչափի որքան մասն է կրել, նախկին դատվածությունների առկայությունը կամ բացակայությունը՝ նշելով նախկինում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման մասին, տեղեկություններ պատիժը կրելու ընթացքում նրա դրսևորած վարքագծի, ուղղված լինելու հանգամանքի վերաբերյալ: Միջնորդագիրը ստորագրվում է պատիժը կատարող հիմնարկի ղեկավարի կողմից:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով.

«1.1.Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննարկելիս դատապարտյալն իրավունք ունի.

1) անձամբ կամ փաստաբանի կամ օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ստանալու միջոցով մասնակցել անկախ հանձնաժողովում իր վերաբերյալ հարցերի քննարկմանը.

2) հայերեն լեզվին չտիրապետելու դեպքում պետության միջոցների հաշվին օգտվել թարգմանչի ծառայություններից.

3) ներկայացնել բացատրություններ և փաստաթղթեր, հանդես գալ հայտարարություններով.

4) հայտնել իր կարծիքը՝ իրեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ:»,

3) 3-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անկախ հանձնաժողովի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելուն հավանություն չտալու մասին որոշումն ընդունվելու դեպքում տվյալ դատապարտյալի վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու հարցը քննարկվում է որոշումը կայացվելուց երեք ամիս անց, բացառությամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:».

4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Անկախ հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անկախ հանձնաժողովի՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելուն հավանություն չտալու մասին որոշումն ընդունվելու դեպքում տվյալ դատապարտյալի վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու հարցը քննարկվում է որոշումը կայացվելուց մեկուկես տարի անց:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի ՆՀ-163-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» ՆՀ-163-Ն հրամանագրի 1-ին հավելվածի՝

1) 2-րդ կետից « Միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար» բառերը հանել, իսկ «ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը» բառերը փոխարինել «ներկայացնելուն» բառով:

2) 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

3) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի դիմումի առկայության դեպքում որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը ներկայացնում է հանձնաժողովին՝ կցելով դատապարտյալի դիմումը և անձնական գործը:

Ստացված դիմումի և անձնական գործի հիման վրա հանձնաժողովի նախագահը նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգը և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր ամսվա 5-րդ օրն առաքում հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի պետին:»,

4) 12-րդ կետից «ենթահանձնաժողովի անդամները ներկայացնում են իրենց կարծիքները,» բառերը փոխարինել «պատիժը կատարող հիմնարկի ղեկավարը զեկուցում է հարցը» բառերը,

5) 14-րդ կետում «հանձնաժողովի կամ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել համապատասխան որոշում կայացրած պատիժը կատարող հիմնարկի ղեկավարը» բառերը փոխարինել «մասնակցում է համապատասխան

պատիժը կատարող հիմնարկի ղեկավարը, ինչպես նաև հանձնաժողովի կամ հանձնաժողովի նախագահի կամ սեփական նախաձեռնությամբ դատապարտյալը:»,

6) 16-րդ կետի առաջին պարբերությունում «ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը» բառերը փոխարինել «ներկայացնելուն» բառով,

7) 18-րդ կետում «ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը» բառերը փոխարինել «ներկայացնելուն» բառով,

8) 20-րդ և 21-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1304-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը հաստատելու մասին» N 1304-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի ՆՀ-163-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1304-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներկայումս ՀՀ-ում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը կարգավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-116-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրի, ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշման դրույթների համաձայն: Նշյալ ակտերով նախատեսված կարգավորումներն ու օրենսդրական հիմքերը կարծես թե բավարար լծակներ են համակարգը կյանքի կոչելու համար, մինչդեռ, պրակտիկայում խնդրո առարկա համակարգում նկատելի են բազմաթիվ թերություններ, ինչով էլ պայմանավորված համակարգը վերանայման կարիք ունի:

Վիճակագրական տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ պայմանական վաղաժամկետ ազատվողների քանակը տարեցտարի նվազում է: Կատարված դիտարկումը կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով, որոնցից է, օրինակ՝ գործող համակարգի բարդեցված կառուցվածքը, գործընթացին մասնակցող պատասխանատու մարմինների գործողությունների անկանխատեսելիությունը, օրենքների անհստակությունը, կայացվող որոշումների հիմքում դրվող ոչ իրատեսական չափորոշիչները, ինչով պայմանավորված էլ կայացված որոշումները դառնում են քննարկման առարկա:

ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրության 4.4-րդ կետում ամրագրված է, որ «Անհրաժեշտ է օրենսդրական

փոփոխությունների միջոցով կատարելագործել հանձնաժողովների գործունեության սկզբունքները, որոշումների կայացման չափանիշները, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ գործերի քննության համար օրենսդրորեն սահմանել ամբողջական կանոններ:

Նման փոփոխությունների իրագործումը մի կողմից կբարձրացնի անկախ հանձնաժողովների գործունեության արդյունավետությունը և կշտկի Հայաստանի Հանրապետությունում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կառուցակարգերում առկա թերությունները, մյուս կողմից կապահովի հասարակության, նրա ներկայացուցիչների մասնակցությունն այդ խնդիրների լուծմանը»:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նախևառաջ պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ Rec(2003) 22 հանձնարարականին: Նշյալ հանձնարարականի ընդունման որոշումը 2000 թվականի Բանտային գերբեռնվածության ու դատապարտյալների քանակի նվազեցման վերաբերյալ հանձնարարականի տրամաբանական շարունակությունն էր: Հանձնարարականների հաջորդականությունը և պայմանական ազատման վերաբերյալ հանձնարարականի բովանդակության ուսումնասիրությունը վկայում են այն մասին, որ վաղաժամկետ ազատման հիմնական և կենտրոնական նպատակներից մեկը քրեակատարողական հիմնարկների բեռնաթափումն է: Միևնույն ժամանակ, պայմանական վաղաժամկետ ազատումը նպատակ է հետապնդում դատապարտյալներին օգնել քրեակատարողական հիմնարկի կյանքից հասարակություն վերադառնալու հարցում՝ ազատությանը հաջորդող համապատասխան պայմանների և հսկողության միջոցով:

Ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականի առկա են պայմանական վաղաժամկետ ազատման երկու հիմնական համակարգեր՝

1) հայեցողական.

2) պարտադիր:

Հայեցողական համակարգով գործող պայմանական վաղաժամկետ ազատման պարագայում օրենքով հստակ պետք է սահմանված լինի պատժի այն նվազագույն ժամանակահատվածը, որը պետք է կրի դատապարտյալը: Տվյալ նվազագույն ժամկետը վրա հասնելու դեպքում իրավասու մարմինները պետք է սկսեն ազատման ընթացակարգը: Սույն համակարգի պարագայում պետք է սահմանված լինեն հստակ և հասկանալի *չափանիշներ:* Ավելին, նման չափանիշները պետք է իրատեսական լինեն՝ հաշվի առնելով դատապարտյալի անհատական, սոցիալական և տնտեսական առանձնահատկություններն ու վերականգնողական ծրագրերի առկայությունը: Օրենքով լիազորված մարմնի կողմից

պայմանական վաղաժամկետ ազատումը մերժող որոշումը կայացնելու դեպքում պետք է նշանակվի նաև հարցի հաջորդ լսման օրը, որն կապահովի դատապարտյալների կողմից ազատման համար կրկին դիմելու հնարավորությունը:

Պարտադիր վաղաժամկետ ազատման համակարգի դեպքում օրենքով սահմանվում է միայն պատժի նվազագույն ժամանակահատվածը, որը պետք է հաշվի առնվի ազատման հարցը քննելիս:

Ակնհայտ է, որ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում առկա է երկու հիմնական համակարգերի չհստակեցված և չտարանջատված խառնուրդ: Մասնավորապես, պայմանական վաղաժամկետ ազատման համար նախատեսվում է ինչպես պատժի նվազագույն ժամանակահատվածը (ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մաս), որը պետք է կրի դատապարտյալը, այնպես էլ ոչ հստակ չափանիշներ, որոնց կիրառումը գործնականում առաջացնում է մի շարք բարդություններ:

Սահմանված չափանիշների բացակայությունը պատժից պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացը դարձնում է ավելի անհաղթահարելի:

Բացի այդ, անհրաժեշտ է նաև նշել, որ ներկայումս անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները կայացվել են հրամանագրով նախատեսված կարգի խախտմամբ: Այս առումով, ՀՀ Սահմանադրական դատարանը 2008 թվականի փետրվարի 5-ի իր ՍԴՈ-733 որոշման մեջ արձանագրել է, որ անկախ հանձնաժողովների կողմից կայացված որոշումները օրենքին հակասելու դեպքում բողոքարկումը միայն հրամանագրով նախատեսված կարգի խախտման համար հակասում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին, 18-րդ հոդվածին և 19-րդ հոդվածի պահանջներին և ճանաչել է անվավեր:

Անդրադառնալով պայմանական վաղաժամկետ ազատման հարցի առնչությամբ որոշում կայացնող մարմիններին՝ անհրաժեշտ է նշել, որ ներկայումս որոշում կայացվում է հետևյալ երեք հանրային մարմինների մասնակցությամբ՝

- քրեակատարողական հիմնարկի վարչակազմ (առաջին օղակ),
- անկախ հանձնաժողով (երկրորդ օղակ),
- դատարան (երրորդ օղակ):

Քննարկենք վերոնշյալ մարմինների գրծառույթներն առանձին-առանձին:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում ***պարտադիր լսում է*** կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ***ներկայացման հարցը***: Այսինքն՝ քրեակատարողական հիմնարկն առաջին այն օղակն է, որը կարող է դրական կամ բացասական լուծում տալ այս հարցին:

Չստորադասելով այն հանգամանքը, որ քրեակատարողական հիմնարկը, թերևս, ամենալավն է տիրապետում դատապարտյալի կարիքներին, քանի որ ամենօրյա հսկողություն և աշխատանքներ է կատարում դատապարտյալի պատժի կրման և ուղղման գործընթացի շրջանակներում, այնուամենայնիվ, որպես պատիժ կատարող մարմին՝ քրեակատարողական հիմնարկը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես «ինքն իր գործունեությունը գնահատող» մարմին: Այլ խոսքով՝ քրեակատարողական հիմնարկը գնահատում է՝ արդյոք իր կողմից իրականացվող աշխատանքները ծառայել են իրենց նպատակին, թե ոչ՝ որոշելով պայմանական վաղաժամկետ ազատման հարցը հաջորդ՝ երկրորդ օղակին ներկայացնելու նպատակահարմարությունը: Բացի այդ, այստեղ առկա է նաև գործառույթների ոչ հստակ տարանջատում՝ փաստորեն, հանգեցնելով տարբեր մարմինների կողմից միևնույն գործառույթի իրականացմանը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է ***պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի*** հավանությանը:

ՀՀ նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրի հավելված 1-ի 6-րդ կետը սահմանում է, որ անկախ հանձնաժողովի աշխատակարգային որոշմամբ ստեղծվում են հանձնաժողովի առնվազն երկու անդամներից կազմված ենթահանձնաժողովներ, որոնք, ըստ քրեակատարողական հիմնարկների, նախապատրաստում են հանձնաժողովի քննարկման համար հարցեր: Նույն հրամանագրի 7-րդ կետի համաձայն՝ ենթահանձնաժողովը ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր ամսվա 15-րդ օրը, քրեակատարողական հիմնարկի ղեկավարի հետ համաձայնեցված օրը այցելում է պատիժը կատարող հիմնարկ, ծանոթանում դատապարտյալի անձնական գործին, ***մեկուսի հանդիպում նրա հետ***, ***անհրաժեշտության դեպքում հանդիպում է նաև պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի հետ***: Արդյունքում՝ ենթահանձնաժողովները անկախ հանձնաժողովի նիստում ներկայացնում են իրենց կարծիքները, որից հետո անցկացվում է քննարկում և քվեարկություն:

Ելնելով վերոգրյալից՝ ստացվում է, որ անկախ հանձնաժողովը որոշում կայացնելիս հիմնվում է իր երկու անդամներից կազմված ենթահանձնաժողովի կարծիքի վրա: Այսինքն՝ անկախ հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են անձամբ հանդիպում դատապարտյալին, լսում նրան, նրա կարծիքը, ծանոթանում նրա գործի բոլոր հանգամանքներին, որը բարձրացնում է սուբյեկտիվ գործոնների կողմից օբյեկտիվ գործոնների ստորադասման ռիսկը: Հարց է ծագում, թե արդյոք երկու անդամի դիտարկման արդյունքում անկախ հանձնաժողովի մնացած անդամների համար անուղղակի ծանոթության ու երկրորդական

աղբյուրի միջոցով ստացած տեղեկությունը բավարար և օբյեկտիվ է անձի ճակատագրի մասին որոշում կայացնելու համար:

Խոսելով անկախ հանձնաժողովի որոշումների բողոքարկման վերաբերյալ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումից՝ չենք կարող չմեջբերել «Սահմանադրական դատարանի որոշումների կատարման գործընթացը Հայաստանում» հետազոտության մեջ տեղ գտած դիտարկումը.

« ա) Որոշման կատարումը օրենսդիր իշխանության կողմից.

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխությունները կատարվել են որոշումն ընդունվելուց ավելի քան 15 ամիս անց՝ 20.05.2009 թվականի ՀՕ-129-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 27.06.2009 թվականին: Այս փաստը արդեն իսկ կարող է վկայել օրենսդրի կողմից Սահմանադրական դատարանի որոշման ոչ պատշաճ կատարման մասին:

Ավելին, թեև ՍԴՈ-733 որոշմամբ սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվեց քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված՝ անկախ հանձնաժողովի որոշումները դատական կարգով բողոքարկելու սահմանափակումը, ինչը նշանակում էր, որ նման սահմանափակումներն օրենսդրորեն պետք է հանվեին, Ազգային ժողովի կողմից այս կապակցությամբ կատարված օրենսդրական փոփոխությունները ևս մեկ անգամ՝ արդեն այլ խմբագրությամբ, մտցրեցին նման սահմանափակում: Այսպես, փոփոխությունների արդյունքում քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասը ստացավ հետևյալ բովանդակությունը.

«Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, բացառությամբ օրենքին հակասելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ ընդունվելու դեպքերի»:

Ինչպես կարելի է համոզվել այս փոփոխությունից, խմբագրված վիճակում օրենքը սահմանում է կանոն, ըստ որի՝ անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, ինչպես նաև այդ կանոնից բացառություններ, երբ որոշումները կարող են բողոքարկվել: Մինչդեռ Սահմանադրական դատարանի որոշումը առհասարակ բացառում էր բողոքարկման սահմանափակումները: Այսպիսով, տվյալ դեպքում ևս առկա է օրենսդրի կողմից Սահմանադրական դատարանի որոշման ուղղակի չկատարում:

Օրենսդրի կողմից պարզապես անտեսվել են ՍԴՈ-733 որոշման մեջ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, ՍԴ-ն նշել է՝ «ՀՀ գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, պարզորոշ ու հստակ սահմանված չեն պայմանական

վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների, քրեական դատավարության օրենսգրքի ու քրեակատարողական օրենսգրքի՝ քննության առարկա դրույթների ու դրանց փոփոխությունների, համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ իրավաչափ կլիներ, որպեսզի պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացը (այդ թվում՝ ժամկետները, չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը և հայեցական լիազորությունների շրջանակը)՝ ՀՀ կողմից որդեգրված կոնկրետ կարգի շրջանակներում, առավել հստակ սահմանվեր օրենսդրությամբ»:

Չնայած դրա, մինչև այժմ (2001 թվականի սեպտեմբեր ամիս) օրենսդրորեն չեն սահմանվել այն չափանիշները, որոնք ենթակա են կիրառման անկախ հանձնաժողովների կողմից՝ պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելուն հավանություն տալու կամ չտալու մասին որոշում կայացնելիս: Նաև օրենսդրորեն սահմանված չէ այդ հանձնաժողովի գործունեության կարգը, հարցերի քննարկման և որոշումների ընդունման ընթացակարգը:»:

Լայնածավալ մեջբերումից ակնհայտ է, որ անկախ հանձնաժողովի որոշումների բողոքարկման օրենսդրական հնարավորությունը դեռևս իր ամրագրումը չի գտել ՀՀ քրեակատարողական օրենսգրքում:

Անդրադառնալով երրորդ օղակին՝ հարկ է նշել, որ վերջինիս կողմից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնելիս ***ամենակարևոր գործոնը հստակ ձևակերպված, հրապարակված, օբյեկտիվ չափանիշների առկայությունն է***, որոնցով պետք է առաջնորդվի դատարանը: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec(2003) 22 հանձնարարականի 18-րդ կետի համաձայն՝ «այն չափանիշները, որոնց ազատազրկման դատապարտված անձինք պետք է բավարարեն, որպեսզի պայմանական վաղաժամկետ ազատ արձակվեն, պետք է հստակ ձևակերպված լինեն: Դրանք պետք է նաև իրատեսական լինեն այն առումով, որ պետք է հաշվի առնեն դատապարտյալի անձը և սոցիալական ու տնտեսական հանգամանքները, ինչպես նաև վերահնտեգրման ծրագրերի առկայությունը»:

Տեղին է նաև նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 13.05.2008թ. իր թիվ ՍԴՈ-753 որոշման մեջ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, հայտնել է դիրքորոշում, համաձայն որի՝ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի, որպեսզի հետևանքները իրավունքի սուբյեկտները համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան

կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Նույնաբովանդակ իրավական դիրքորոշումներ են տեղ գտել նաև Եվրոպական դատարանի վճիռներում (տե՛ս օրինակ Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (The Sunday Times v. United Kingdom) գործով վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49, 1979 թ. ապրիլի 26):

Հստակ ձևակերպված չափանիշները նախևառաջ անհրաժեշտ են, որպեսզի ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալներն ի վիճակի լինեն կանխատեսել և համապատասխանաբար կարգավորել իրենց վարքագիծը: Բացի այդ, հստակությունն անհրաժեշտ է համակարգում չարաշահումների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, ինչպես նաև համակարգի նկատմամբ հասարակական վստահություն ձևավորելու համար:

Տվյալ պարագայում ակնհայտ է, որ վերը բնութագրվող չափանիշները մեր օրենսդրությունում իսպառ բացակայում են:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սույն նախագծերով փորձ է կատարվել նախատեսել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման այնպիսի համակարգ, որը կունենա օրենսդրական կայուն հիմք և կնպաստի գործուն և արդյունավետ պրակտիկայի ձևավորմանը: Ի վերջո, անհրաժեշտ է նշել, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման համար հստակ և իրական չափանիշների նախատեսումն իր հերթին կապահովի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված պատժի նպատակների իրականացումը: Այս առումով ցանկալի է ընդգծել դատապարտյալի ուղղման գլխավոր նպատակին հասնելու հանգամանքը, քանի որ պետք է ստեղծվի այնպիսի իրավիճակ, որ դատապարտյալը շահագրգռված լինի ուղղվելու և որպես ուղղվելու գրավական՝ իրեն դրսևորի պատշաճ ձևով՝ վստահ լինելով, որ երբ լրանա օրենքով նախատեսված պատժի կրման ժամկետը, և եթե նա համապատասխանի օրենքով սահմանված չափանիշներին, այսինքն՝ փաստված լինի, որ վերջինս բռնել է ուղղման ճանապարհը, ապա ազատ կարձակվի:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Հաշվի առնելով վերոգրյալը և ի կատարումն ՀՀ Նախագահի հիշյալ հրամանագրի պահանջի՝ սույն նախագծերով առաջարկվում են կարգավորումներ, որոնք ուղղված են անկախ հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես՝ նախատեսվել են.

1. Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի և անկախ հանձնաժողովների գործառույթների հստակ տարանջատման մեխանիզմ, ինչպես նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի բարդեցված կառուցվածքի պարզեցում:

Այսպես, այն դեպքում, երբ դատապարտյալը կրել է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման օրենսդրական հնարավորություն նախատեսող ժամկետը, ապա պատժից պայմանական ազատման գործընթացի քննարկումը սկսվում է դատապարտյալի կողմից դիմումի առկայության դեպքում:

Անդրադառնալով դիմումի առկայության առնչությամբ միջազգային փորձին, հարկ է նկատել, որ քննարկվող հարցի առնչությամբ միասնական մոտեցումը բացակայում է: Կան երկրներ, որոնք պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննվում է դատապարտյալի դիմումի հիման վրա (Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա), և կան երկրներ, որոնցում քննվում է մեխանիկորեն (Իսպանիա, Նիդերլանդներ, Պորտուգալիա, Խորվաթիա):

Ֆրանսիայում դատապարտյալը պետք է դիմում ներկայացնի պատիժների կատարման գծով դատավորին կամ դատարան:

Գերմանիայում նույնպես դատապարտյալը պետք է դիմում ներկայացնի տարածքային դատարաններում պատիժների կատարման հարցերով քրեական պալատ:

Իսպանիայում պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննությունը պետք է սկսվի մեխանիկորեն, հակառակ դեպքում դատապարտյալը կարող է բողոք ներկայացնել:

Տեղին է անդրադառնալ այն հանգամանքին, որ դատապարտյալի կողմից դիմումի ներկայացումը իրենից արդեն իսկ ներկայացնում է դատապարտյալի համաձայնությունը իրեն պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ: Այդ իսկ պատճառով դատարանը, ի շարս այլ չափանիշների, հաշվի է առնում այդպիսի համաձայնության առկայությունը:

Դիմումի առկայության դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը օրենքով (օրենքի նախագծով) սահմանված ժամկետում անկախ հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը: Անհրաժեշտ է ընդգծել, որ անկախ հանձնաժողովի կողմից խնդրո առարկա հարցի քննարկման գործընթացից «ենթահանձնաժողովների ինստիտուտը» հանվել է, որպիսի պայմաններում անկախ հանձնաժողովն իր ողջ կազմով քննում է դատապարտյալի գործը դատապարտյալի մասնակցությամբ, ով էլ իր հերթին ձեռք է բերում մի շարք իրավունքներ: Անկախ հանձնաժողովի կողմից որոշումը կայացնելուց հետո որոշման պատճենը, ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ստորագրությամբ հանձնվում է դատապարտյալին և ուղարկվում է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմին և պատժի կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

Անկախ հանձնաժողովի կողմից դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիրը դատարան ներկայացնելուն հավանություն տալու

մասին որոշում կայացնելու դեպքում որոշման ստացման պահից եռօրյա ժամկետում պատիժը կատարող հիմնարկի ղեկավարը միջնորդագիր է ներկայացնում դատարան:

2. հստակ և իրական չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնվեն դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման ընթացքում:

Այսպես, արտասահմանյան երկրների փորձի և միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանական վաղաժամկետ ազատման չափանիշները բաժանվում են երկու խմբի.

- դատապարտյալի անցյալին և ներկային վերաբերող գործոնների գնահատում (ազատազրկման ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագիծը, կարիքները, նրա հետ իրականացված աշխատանքների արդյունքները և այլն),
- ապագային վերաբերող գործոնների գնահատում (պայմանական վաղաժամկետ ազատվելուց հետո կրկին հանցանք կատարելու ռիսկի կանխատեսումը):

Առաջին խմբի շրջանակներում նախագծում առանձնացված են հետևյալ չափանիշները՝

- առկա է դատապարտյալի համաձայնությունը,
- չունի կարգապահական տույժ,
- պատճառած վնասը հարթվել է կամ առկա է դատապարտյալի և տուժողի գրավոր համաձայնությունը պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ, եթե առկա է պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջ,
- պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատել է պատժի կրման վայրում, սակայն պատիժը կատարող մարմնում աշխատելու հնարավորության բացակայությունը կամ առողջական խնդիրներից ելնելով դատապարտյալի չաշխատելը չպետք է հիմք հանդիսանա պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու համար,

Երկրորդ խմբի շրջանակներում նախագծում առանձնացված է հետևյալ չափանիշը՝

- դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը ցածր է:

Դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու վտանգը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ չափորոշիչները.

1) խրախուսանքի առկայությունը,

2) պատժի կրման ընթացքում մարզական, կրթական կամ մշակութային միջոցառումներին մասնակցությունը,

3) ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապը, խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,

4) հոգեկան և առողջական վիճակը, աշխատունակությունը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և հարկադիր բուժման արդյունքը,

5) հանցագործության բնույթը և հանրային վտանգավորությունը.

6) հանցագործությունների ռեցիդիվը:

Ընդ որում՝ դատարանը կարող է հաշվի առնել դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու վտանգը գնահատող այլ չափորոշիչներ:

Հատկանշական է նաև, որ, ըստ նախագծերի, վերոնշյալ չափանիշները պետք է կիրառվեն և գնահատվեն նաև անկախ հանձնաժողովի կողմից:

3. դատապարտյալին տրվել են մի շարք իրավունքներ, որոնք ուղղված են իրեն վերաբերող որոշման կայացմանը ներկա գտնվելուն և իր «պաշտպանությունն» իրականացնելուն:

Մասնավորապես՝ ըստ նախագծի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննարկելիս դատապարտյալն իրավունք ունի.

1) անձամբ կամ փաստաբանի կամ օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ստանալու միջոցով մասնակցել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովում իր վերաբերյալ հարցերի քննարկմանը.

2) հայերեն լեզվին չտիրապետելու դեպքում պետության միջոցների հաշվին օգտվել թարգմանչի ծառայություններից.

3) ներկայացնել բացատրություններ և փաստաթղթեր, հանդես գալ հայտարարություններով.

4) հայտնել իր կարծիքը՝ իրեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ:

Վերոգրյալ իրավունքների համալիր վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ դատապարտյալը կարող է իրացնել իր իրավունքները՝ ապահովելով մրցակցություն նաև անկախ հանձնաժողովում:

Սույն համատեքստում անդրադարձ կատարելով միջազգային ստանդարտներին՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պատպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ Եվրոպական դատարանի ներկայացրած դիրքորոշումները:

Մասնավորապես՝ Հուսսեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (տե՛ս Abed Hussain v. the United Kingdom, գանգատ թիվ 21928/93, 1996 թ. Փետրվարի 21) գործով Եվրոպական Դատարանը նշել է՝

«59. … Այնպիսի սկզբունքային նշանակություն ունեցող գործերով, որպիսինն են ազատությունից զրկելու հետ կապված գործերով, և երբ ծագում են հարցեր, կապված, օրինակ, դիմողի բնավորության և հոգեվիճակի գնահատման հետ, արդար դատավարության ապահովման համար կարող է անհրաժեշտ լինել, որպեսզի դիմողը ներկա լինի դատավարությանը:

60. … Դիմողի իրավիճակի պես իրավիճակներում, երբ քննարկվում է ազատազրկման զգալի ժամկետի հետ կապված հարց, և որտեղ նրա բնավորությանը բնորոշ գծերը և հասունության աստիճանը կարևոր դեր են խաղում որոշելու, թե վտանգավոր է արդյոք նա հանրության համար, 5-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջում է բանավոր լսումներ մրցակցային դատավարության ենթատեքստում, որն ենթադրում է դիմողի շահերի օրինական ներկայացուցչություն ու վկաներ հրավիրելու և հարցաքննելու հնարավորություն»:

Մեկ այլ՝ Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի (տե՛ս Amuur v. France, գանգատ թիվ 19776/92, 1996 թ. հունիսի 25) գործով Եվրոպական Դատարանը նշել է՝

«50. … Պնդելով, որ ցանկացած ազատազրկում պետք է տեղի ունենա օրենքով սահմանված կարգով, Կոնվենցիայի 5(1) հոդվածը նախևառաջ պահանջում է, որպեսզի ցանկացած կալանավորում կամ ձերբակալում ունենա իրավական հիմնավորում ներպետական օրենսդրության մեջ: Սակայն այս բառերը ոչ միայն հղում են պարունակում ներպետական օրենսդրությանը, ինչպես «օրենքին համապատասխան» և «օրենքով նախատեսված» արտահայտությունները, որոնք առկա են 8-11 հոդվածների երկրորդ կետում: Այս բառերը նաև վերաբերում են օրենքի որակին, պահանջելով, որպեսզի այն համապատասխանի օրենքի գերակայության սկզբունքին, որը բնորոշ է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին: Որպեսզի հավաստիանալ, համապատասխանում է արդյոք ազատազրկումը ազգային օրենսդրության հետ համատեղելիության սկզբունքին, դատարանը պետք է ոչ միայն գնահատի քննարկվող ոլորտի ազգային օրենսդրությունը, այն և՝ գնահատի այլ իրավական ակտերի որակը, որոնք կիրառվել են քննարկվող անձանց հանդեպ: Այս իմաստով որակը ենթադրում է, որ եթե ազգային օրենքը պահանջում է ազատազրկում, հատկապես քաղաքական ապաստան խնդրող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ, ապա այն պետք է բավարար չափով մատչելի և ճշգրիտ լինի՝ կամայականության վտանգից խուսափելու համար»:

Հետևաբար, պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ հարցի քննությունը պետք է՝

- հիմնված լինի օրենքով սահմանված, մատչելի և կանխատեսելի ընթացակարգերի վրա,
- իրականանա մրցակցային սկզբունքով,

- կայացված որոշումը պետք է լինի պատճառաբանված և օբյեկտիվ, իսկ որոշման հետ դատապարտյալի անհամաձայնության դեպքում, դատապարտյալն իրավունք ունենա բողոքարկելու այն:

4. հաշվի առնելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումը՝ նախագծով առաջարկվում է նախատեսել անկախ հանձնաժողովների կողմից կայացված որոշումների դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման դեպքում կապահովվի պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման արդյունավետության բարձրացումը: Մասնավորապես՝

- ✓ կհստակեցվեն պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի և անկախ հանձնաժողովի գործառույթները՝ բացառելով նույնաբնույթ գործառույթների իրականացումը,
- ✓ կսահմանվեն հստակ չափանիշներ, որոնք կդրվեն և՛ անկախ հանձնաժողովի, և՛ դատարանի պատճառաբանված որոշումների հիմքում,
- ✓ դատապարտյալն իրավունք կունենա մասնակցելու իրեն վերաբերող որոշումների կայացմանը և իրականացնելու համապատասխան պաշտպանություն, այդ թվում՝ բողոքարկելով անկախ հանձնաժողովի որոշումները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի ՆՀ-163-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1304-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1304-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի ՆՀ-163-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1304-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1304-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի կամ եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: